Նա ժպտում էր եւ իր հրեշտակային անմեղ բարեսրտութեամբ ասում էր ինձ.

— Չէ, կարող եմ, ես չեմ յոգնի: Դու սովորիր, որ հայրս չծեծէ քեզ:

Թէեւ Սոնան շատ էր ցանկանում միշտ օգնել ինձ, որ ես ժամանակ գտնէի դասերս պատրաստելու, բայց չէր կարողանում, որովհետեւ վերջին օրերում նրան արգելեցին մօտենալ ինձ, եւ ես այնուհետեւ միայնակ էի գնում այգուց խոտ քաղելու, եւ միշտ տխուր էի լինում, երբ նա ինձ հետ չէր:

Այսպէս անցուցի ես եօթն բոլորակ տարիներ. — մի խորհրդաւոր թիւ, որի մէջ թաքնուած են իմ մանկութեան սկզբնական տանջանքները... Այս եօթն տարոայ ընթացքում, ես անցայ գիտութեան բոլոր աստիճանները, այսինքն, սովորեցայ այնքան, որքան կարող էր սովորել այն ժամանակ մի բարձր ուսում ստացող աշակերտ: Ես կարդացել էի բոլոր գրքերը, որ յայտնի էին մեր երկրում, — Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, Հին կտակարան, Նարեկ եւ մինչեւ անգամ այն ահագին գիրքը, որ ես փոքր հասակումս դժուարութեամբ կարողանում էի վեր առնել: Ես կարողանում էի գրել եւ գրածս կարդալ, ես գիտէի եւ մի քանի կանոններ հայոց հին լեզուի քերականութիւնից: Բայց մի բան, որ չկարողացայ ձեռք բերել ես — դա էր վարդապետիս խորին գիտութիւնը ոգիների եւ կախարդութիւնների մասին. այդ գիտութիւնը վարժապետս պահում էր իր մօտ որպէս մի գաղտնիք, որին մասնակից լինելու համար պէտք էր տասն-քսան տարի ծառայել նրան:

Նրա դպրոցում աշակերտները երկար տարիներով անշարժ մնում եւ ծերանում էին: Մօրուքաւոր, անմօրուք, չափահաս, անչափահաս, երեխայ եւ երիտասարդ, բոլորը խառնուած էին միմեանց: Տասն տարեկան էի ես, երբ մտայ այդ դպրոցը. այն օրից անցել էր աւելի քան տասն եւ երկու տարի դա փոքր ժամանակ չէ. այժմ ես բոլորովին հասուն պատանի էի: Բայց, չնայելով իմ հասակին, վարժապետս վարւում էր ինձ հետ, որպէս մի երեխայի հետ — դարձեալ նոյն ֆալախկան, դարձեալ նոյն «խրատի» հարուածները ափերիս մէջ, դարձեալ նոյն մերկ ոտներով չոքելը աղիւսի կտորտանքի վրա... մի խօսքով, պատիժների թոից ոչինչ չէր պակասել: Բայց զարմանալին այն էր, որ ես այն աստիճան սովորած էի այդ պատիժներին, այն աստիճան մեռած էր իմ մէջ պատոի, հպարտութեան եւ անձնասիրութեան զգացմունքը, որ ես անտրտունջ կերպով համբերում էի բոլորին, որպէս էշը, եզը, ձին համբերում են իրանց տիրոջ անգութ հարուածներին: Բայց մի անգամ ընդհակառակը պատահեց:

Մեծ զատկի տօնն էր. աշակերտներից ոչ մէկը չկարողացաւ պատրաստել «դանիէլի գիրքըէ եկեղեցում կարդալու համար: Այդ գիրքը կարդում